



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՍԻՍ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք  
 ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,  
 հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 05-Ն







2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի  
 Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջով **Մասիս  
 քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝**

1.Հաստատել 2017-2021 թվականների զարգացման ծրագիրը համաձայն կից հավելվածի:

### ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

		Կողմ	դեմ	ձեռնպահ
1.	Պապիկ Աբգարյան		_____	_____
2.	Վաչագան Աբգարյան		_____	_____
3.	Արսեն Եղիազարյան		_____	_____
4.	Խաչիկ Խաչատրյան		_____	_____
5.	Սամվել Հովհաննիսյան		_____	_____
6.	Արման Ղազարյան		_____	_____
7.	Էդվարդ Մարգարյան		_____	_____

- |            |             |  |       |
|------------|-------------|--|-------|
| 8. Արմեն   | Մարտիրոսյան |   | _____ |
| 9. Աբրահամ | Շահվերդյան  |  | _____ |
| 10. Սարգիս | Ռաֆայելյան  |  | _____ |
| 11. Գարիկ  | Սավադյան    |   | _____ |
| 12. Էդմոնդ | Ստեփանյան   |   | _____ |
| 13. Վահան  | Վարդանյան   | _____  | _____ |
| 14. Գեղամ  | Փահլևանյան  |   | _____ |

**Համայնքի ղեկավար՝**



**ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

Հավելված

Մասիս քաղաքային համայնքի ավագանու

2017թ. հունվարի 23 -ի թիվ 05-Ն որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ**

**ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ  
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ**

**ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

ՄԱՍԻՍ 2017թ.

# 1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

## 1.1. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Մասիս քաղաքը գտնվում է Արարատյան դաշտի կենտրոնական մասում՝ Հրազդան գետի ստորին հոսանքի ձախ ափին: Հյուսիսից սահմանակից է Արարատի մարզի Այնթապ, Նոր Խարբերդ, արևմուտքից՝ Սայաթ-Նովա, հարավից՝ Նորամարգ, արևելքից՝ Մարմարաշեն, Նոր Կյուրին գյուղերին: Մարզկենտրոն Արտաշատից գտնվում է 20 կմ դեպի արևմուտք, իսկ քաղաքամայր Երևանից 17 կմ դեպի հարավ: Մասիս քաղաքը զարգացել է որպես Երևանի արբանյակ քաղաք: Վաթսունական թվականների վերջերից սկսած՝ քսան տարվա ընթացքում, Մասիսը նպաստավոր տնտեսաաշխարհագրական դիրքի և զարգացած երկաթուղային հանգույցի շնորհիվ ձեռք է բերել հանրապետության խոշորագույն մատակարար քաղաքի կարգավիճակ: 20-30 տարվա ընթացքում քաղաքը ապրել է բուռն զարգացում, սակայն վերջին տարիների ժողովրդագրական ցնցումները և սոցիալ-տնտեսական անկումները քաղաքին առաջադրել են լուրջ հիմնախնդիրներ: Այսուհանդերձ՝ Մասիս քաղաքի բարենպաստ ֆիզիկաաշխարհագրական և տնտեսաաշխարհագրական դիրքի, ճանապարհային և երկաթուղային լավ զարգացած ցանցի, գյուղատնտեսության համար բարենպաստ բնական պայմանների, արդյունաբերության համար բավարար մարդկային ու արտադրական ենթակառուցվածքային ռեսուրսների և համայնքային իշխանությունների պատրաստականության ու պատրաստակամության շնորհիվ կարելի է ապահովել բարգավաճման ռեալ հնարավորություններ:

Մասիս քաղաքի՝ որպես առանձին բնակավայրի մասին առաջին հիշատակությունը կապվում է երկաթուղային կիսակայարան ՌԻլուխանլուի հետ, որը դարասկզբին բնակեցված է եղել մասամբ հայ և ռուս երկաթուղայինների ընտանիքներով, իսկ մեծամասամբ թուրքական կիսաքոչվոր տարրերով: Գյուղի, ապա ավանի կարգավիճակ ունեցող բնակավայրը՝ որպես ինքնուրույն վարչական միավորի շրջկենտրոն, առաջին անգամ հանդես է եկել 1937 թվականի դեկտեմբերի մեկին: Նոր կազմավորված շրջանը, Զանգիբասար շրջկենտրոնի անունով, որի բնակչության գերակշիռ մասը կազմել են վերջին հարյուրամյակում ներթափանցած թուրքական տարրերը, կոչվել է Զանգիբասարի շրջան: Այն լուծարվել է 1953 թ-ի մարտին, որից հետո բնակավայրը՝ Հրազդան անունով, մաս է կազմել Երևանի Շահումյան շրջանի: 1969 թվականի հունվարի 14-ին Արտաշատի, Էջմիածնի և Երևան քաղաքի Լենինյան ու Շահումյան շրջանների տարածքներից կազմավորվել է նոր՝ Մասիսի շրջան: Նորաստեղծ շրջանի կենտրոն է դարձել

վերանվանված Հրազդան ավանը՝ կրելով Մասիս անունը: 1996 թվականի ապրիլին՝ 27 տարվա վաղեմություն ունեցող Մասիսի շրջանը Արարատի և Արտաշատի շրջանների հետ մտավ նոր, ավելի խոշոր վարչատարածքային միավորի մեջ՝ կազմելով Արարատի մարզը:

«ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» օրենքով 07.11.1995 թ.-ին Մասիս ավանը ստացել է քաղաքի կարգավիճակ:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 1870.23 հա:

Համայնքի տարածքով են անցնում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության ենթակայության տակ գտնվող Մ-2 (Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի Իսլամական Հանրապետության սահման), միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհը, Հ-12 (Վաղարշապատ-Մ-2), Հ-12 (Հ-8-Այնթապ-Մասիս-Ռանչպար-Մ-3) և Հ-14 (Երևան-Մասիս) հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհները: Մասիս քաղաքում կա խոշոր երկաթուղային կայարան, որն ունի միջմարզային նշանակություն և սպասարկում է Երևան քաղաքին:

Համայնքի տարածքով հոսում է Հրազդան գետը, հարավում՝ պետական սահմանի երկարությամբ՝ Արաքս գետը:

Բնակավայրի մակերևույթը հարթավայրային է, միջին բարձրությունը ծովի մակարդակից՝ 800 մետր: Գտնվում է 7-9 բալանոց սեյսմիկ գոտում: Թեև անմիջապես քաղաքի տարածքում չկան հանքային ռեսուրսներ, սակայն մոտակայքում կան մարմարի (Մարմարաշեն), ավազի (Ռանչպար), կավի (Այնթապ) հանքավայրեր: Կլիման չոր ցամաքային է: Ամառը շոգ է, տևական (4-5 ամիս): Հուլիսի միջին ջերմաստիճանը 26-270°C է: Բնորոշ են լեռնահովտային քամիները: Ձմեռը ցուրտ է, անամպ, անհողմ: Հունվարի միջին ջերմաստիճանը -4-ից -60°C է: Հաստատուն ձնածածկույթ ամեն տարի չէ, որ ձևավորվում է: Ընդհանուր Արարատյան դաշտի գոգ բնույթի հետևանքով ձմռանը դիտվում է ջերմաստիճանի շրջադասություն. դաշտում այն լինում է ավելի ցածր, քան շրջակա նախալեռներում: Գարունը կարճատև է: Բնորոշ են անկայուն եղանակները և համեմատաբար առատ տեղումները: Հրաշալի է արևոտ, տևական աշունը: Տարեկան միջին ջերմաստիճանը 8-120°C է, առավելագույնը՝ 420°C, նվազագույնը՝ - 300°C, տարեկան միջին տեղումները՝ 300-350 մմ (առավելագույնը՝ ապրիլ-մայիս ամիսներին): Հարևանությամբ են հոսում Հրազդան և Այդր լճից սկիզբ առնող Սևջուր գետերը, հարավում՝ պետական սահմանի երկարությամբ՝ Արաքս գետը, որոնք տարանցիկ են, հորդանում են գարնանը և երբեմն ավերից դուրս գալիս: Քաղաքից հարավ կան արհեստական լճեր: Բնական լանդշաֆտը կիսանապատային է՝ անապատային տեղամասերով: Տիրապետում են բաց շագանակագույն, գորշ, արկալի, տեղ-տեղ աղակալած կիսանապատային հողերը, որոնք, սակայն, աստիճանաբար զիջել են մշակովի հողերին: Բնորոշ բուսատեսակներն են օշինդրը, անթառամը, օշանը,

հավամրգին: Կենդանիներից տարածված են սողուններն ու կրծողները: Շատ են թռչունները:

Բնատեսուրսային պոտենցիալը մեծ է: Հողային ռեսուրսները մեծ չեն: Ունի հարուստ ջրային ռեսուրսներ՝ կապված արտեզյան ջրհորների առատության (վրկ. 6-8 մ3) և Հրազդան գետի հետ: Բավարար են կլիմայական ռեսուրսները (լույսի և ջերմության առատություն):

## **1.2. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

### **Համայնքի բնակչության թիվը և սոցիալական կազմը՝**

- կանայք՝ 12 084
- տղամարդիկ՝ 10 583
- բնակչության տարիքային կազմը՝
  - 0-6 տարեկան՝ 2 265
  - 7-17 տարեկան՝ 2 265
  - 18-63 տարեկան՝ 14 196
  - 63-ից բարձր տարեկան՝ 2 348
- կենսաթոշակառուներ՝ 2 348
- փախստականներ՝ 16
- միակողմանի ծնողազուրկ երեխաներ՝ 411
- երկկողմանի ծնողազուրկ երեխաներ՝ 16
- հայրենական պատերազմի մասնակիցներ՝ 2
- արցախյան պատերազմի մասնակիցներ՝ 311
- հաշմանդամներ՝ 1447
- աշխատունակներ՝ 490
- զբաղվածներ՝ 82
- գործազուրկներ՝ 408
- տնային տնտեսությունների (ծխերի) թիվը՝ 5343
- ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ՝ 501
- հայրենական պատերազմներում զոհվածների ընտանիքներ՝ 1
- արցախյան պատերազմներում զոհվածների ընտանիքներ՝ 50
- անօթևան ընտանիքներ՝ 1

**1.3. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ**

- Համայնքի ավագանու անդամների թիվը՝ 15
- Համայնքի աշխատակազմի կառուցվածքը և հաստիքների թիվը՝

	<b>Հաստիքի անվանումը</b>	<b>Հաստիքների թիվը</b>
<b>Հայեցողական պաշտոններ</b>		
1	Քաղաքապետի տեղակալ	3
2	Քաղաքապետի խորհրդական	1
3	Քաղաքապետի օգնական	3
4	Մամուլի քարտուղար	1
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ՝</b>	<b>8</b>
<b>Համայնքային ծառայության պաշտոններ</b>		
	Աշխատակազմի քարտուղար	1
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ՝</b>	<b>1</b>
<b>Տինանսական բաժին</b>		
1	Բաժնի պետ	1
2	Գլխավոր մասնագետ	2
3	Առաջատար մասնագետ	1
4	1-ին կարգի մասնագետ	1
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ՝</b>	<b>5</b>
<b>Եկամուտների և ինֆորմացիայի բաժին</b>		
1	Բաժնի պետ	1
2	Գլխավոր մասնագետ	2
3	Առաջատար մասնագետ	1
4	1-ին կարգի մասնագետ	1
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ՝</b>	<b>5</b>

<b>Ներքին աուդիտի բաժին</b>		
1	Բաժնի պետ	1
2	Գլխավոր մասնագետ-աուդիտոր	1
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ՝</b>	<b>2</b>
<b>Քաղաքապետարանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում, քաղաքացիական կացության ակտերի գրանցման Մասիսի տարածքային բաժին</b>		
1	Բաժնի պետ	1
2	1-ին կարգի մասնագետ	1
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ՝</b>	<b>2</b>
<b>Քաղաքապետարանի աշխատակազմի մասնագետներ</b>		
1	Գլխավոր մասնագետ	7
2	Առաջատար մասնագետ	9
3	1-ին կարգի մասնագետ	5
4	2-րդ կարգի մասնագետ	3
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ՝</b>	<b>24</b>
<b>Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ</b>		
1	Քարտուղարուհի	1
2	Տնտեսվար	1
3	Վարորդ	1
4	Էլեկտրիկ	1
5	Հավաքարար	3
6	Պահակ	3
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ՝</b>	<b>10</b>
	<b>ԸՆԴՀԱՆՈՒՐԸ՝</b>	<b>57</b>



- Համայնքի ենթակայության կազմակերպությունները և դրանց հաստիքների թիվը՝

Հ/Հ	Կազմակերպությունների անվանումը	Հաստիքների թիվը
1	«Մասիսի քաղաքային կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ	22
2	«Մասիսի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն» ՀՈԱԿ	20
3	«Մասիսի Առնո Բարաջանյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	45
4	«Մասիսի գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ	10
5	«Մասիսի Արմեն Նազարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	22
6	«Մասիսի մշակույթի կենտրոն» ՓԲԸ	2
7	«Մասիսի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ	18
8	«Մասիսի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ	18
9	«Մասիսի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ	38
10	«Մասիսի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ	25
11	«Մասիսի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ	22
12	«Մասիսի թիվ 7 մանկապարտեզ» ՀՈԱԿ	16
13	«Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ	7
14	«Մաքուր Մասիս» ՓԲԸ	39

**1.4. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ**

Համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը սահմանվել է ՀՀ կառավարության 14.03.1997թ.թիվ 51 որոշմամբ: 1997 թվականից սկսած համայնքի սեփականություն հանդիսաող գույքի ցանկը ենթադրվել է որոշակի փոփոխությունների:

Ստորև ներկայացվում է համայնքի ենթակառուցվածքների վերլուծության, նրանց ֆիզիկական վիճակների ընդհանուր գնահատականը, դրանց կապիտալ նորոգման, վերակառուցման, փոխարինման անհրաժեշտությունը:

**Համայնքի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների վիճակի գնահատում՝**

Հ/Հ	Կառույցը	Հասցե	Կառուցմ. տարեթիվ	Մակերես մ <sup>2</sup>	Ընդհանուր վիճակի գնահատում	Նորոգման, փոխարինման կարիք	Այլ նշումներ
1	Համայնքապետարանի վարչական շենք	Կենտրոնական հրապարակ 4	1972-1973 թթ.	800	բավարար	3-5 –րդ հարկերը և տանիքը նորոգման կարիք ունի	հիմնովին վերանորոգվել են 1-2-րդ հարկերը
2	Էլ. ենթակայան	Կենտրոնական հրապարակ 4	1972-1973 թթ.	28	բավարար	նորոգման կարիք չունի	
3	Վարչական շենքի մաս (Ավանային քաղխորհրդի շենք)	Արարատյան փող. 3	1975թ.	45	վատ	հիմնանորոգման կարիք ունի	
4	Վարչական շենքի մաս (Ավանային քաղխորհրդի շենք)	Արարատյան փող. 3	1975թ.	69.1	վատ	հիմնանորոգման կարիք ունի	
5	«Մասիսի Արմեն Նազարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	ն/թ, 2-րդ փող, 2. 33	1982թ.	781.7	լավ	նորոգման կարիք չունի	
6	«Մասիսի թիվ 1 մանկապարտեզ » ՀՈԱԿ-ի շենք	ն/թ Դպրոցականների 3	1975թ.	2013.9	բավարար	ունի հիմնանորոգման կարիք, առկա է ուսումնանյութական բազայի ոչ բավարար	

						հագեցվածություն, պահարանների, մահճակալների, մարզագույքի անհրաժեշտություն	
7	«Մասիսի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենք	ն/թ թիվ 8/2	1976թ.	1931.9	բավարար	ունի հիմնանորոգման կարիք, առկա է ուսումնանյութական բազայի ոչ բավարար հագեցվածություն, պահարանների, մահճակալների, մարզագույքի անհրաժեշտություն	
8	«Մասիսի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենք	ն/թ Ազատամարտիկների 27	1976թ.	2834.4	շատ վատ	ունի հիմնանորոգման կարիք, առկա է ուսումնանյութական բազայի ոչ բավարար հագեցվածություն, պահարանների, մահճակալների, մարզագույքի անհրաժեշտություն	
9	«Մասիսի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենք	Հանրապետության թիվ 2/35	1980թ.	1720.7	բավարար	ունի հիմնանորոգման կարիք	
10	«Մասիսի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենք	Հերացու 5	1979թ.	2349.7	վատ	ունի հիմնանորոգման կարիք, առկա է ուսումնանյութական բազայի ոչ բավարար հագեցվածություն, պահարանների, մահճակալների, մարզագույքի անհրաժեշտություն	

11	«Մասիսի թիվ 7 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենք	Շիրակի 8	1982թ.	868.8	շատ վատ	ունի հիմնանորոգման կարիք, առկա է ուսումնանյութական բազայի ոչ բավարար հագեցվածություն, պահարանների, մահճակալների, մարզագույքի անհրաժեշտություն	
12	«Մասիսի Առնո Բաբաջանյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի շենք	Հերացու 7	1982թ.	1575.3	բավարար	ունի մասնակի նորոգման կարիք	
13	«Մասիսի քաղաքային կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ի շենք	ն/թ թիվ 27/13	1988թ.	616	վատ	ունի հիմնանորոգման և գրքային ֆոնդի բարելավման խիստ կարիք	
14	Մասիսի մշակույթի տուն (կիսակառույց)	Արատյան փող.	1983թ.	3157.2	շատ վատ	վերակառուցման կարիք ունի	Կիսակառույց է
15	«Մասիսի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն» ՀՈԱԿ-ի շենք	Դպրոցականների փող, 1-ին նրբ., 27/13	1988թ.	616	բավարար	ունի նորոգման կարիք	
16	Մարզադաշտ	3-րդ թաղամաս	1985թ.	44.800	վատ	ունի հանդերձարանների, սանհանգույցի, ցանկապատման և որոշակի քանակով նստատեղերի կառուցման կարիք	
17	Մարզադաշտ	4-րդ փողոցի 53/6	1969թ.	7.200	վատ	ունի նստատեղերի և ցանկապատի հիմնանորոգման կարիք	

**1.5. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- Արտադրական ձեռնարկությունները՝

Հ/Հ	Ձեռնարկության անվանումը	Հասցե	Գործունեության բնագավառը և արտադրատեսակները	Առկա իրավիճակը /գործում է, չի գործում, գործում է մասնակի/
1	Երևանի կոնյակի, գինու, օղու կոմբինատի Մասիսի մասնաճյուղ	Կայարան, 2-րդ թ/մ, 1-ին փող., թիվ 1	Կոնյակի, գինու, օղու արտադրություն	գործում է
2	Մասիսի մեխ. վերանորոգման գործարան ՓԲԸ	Արդյունաբերական հանգույց, Սայաթ-Նովայի 26	բետոնապատ խողովակների արտադրություն	չի գործում
3	«Ա.Դ.Հ.Գ.» ՓԲԸ	Արդյունաբերական հանգույց, Երկաթուղայինների 8	Ոսկու կորզումն ձուլում	գործում է
4	«Շ.Ն.Մ .» ԱԶ	Արդյունաբերական հանգույց, Երկաթուղայինների 19	շինանյութի արտադրություն	չի գործում
5	«Բենիկ և Նառա» ՍՊԸ	Արդյունաբերական հանգույց, Գործարանային 56	Ալյուրի և անասնակերի արտադրություն	գործում է
6	«Գրանդ Մաստեր» ՍՊԸ	Արդյունաբերական հանգույց, Գործարանային 8	ստվարաթղթե արկղերի արտադրություն	գործում է

7	«Ինտերնեշնլ Մասիս Տաբակ» ՍՊԸ	Արդյունաբերական հանգույց, Գործարանային 10	ծխախոտի արտադրություն	գործում է
8	«Կաշի-Էմ» ՓԲԸ	Արդյունաբերական հանգույց, Գործարանային 48	կաշվե արտադրություն	չի գործում
9	«Մասիս Տաբակ» ՍՊԸ	Արդյունաբերական հանգույց, Գործարանային 10/2	ծխախոտի արտադրություն	գործում է
10	«Մասիս պահածոյագործ» ԲԲԸ	Արդյունաբերական հանգույց, Գործարանային 6	պահածոյի արտադրություն	չի գործում
11	«Մասիսի հուշաքար» ՍՊԸ	Երևանյան 165	տապանաքարարերի արտադրություն	գործում է
12	«Հայէլեկտրոմեքառ» ՓԲԸ	Արդյունաբերական հանգույց, Երկաթուղայինների փողոց 4	առևտրային գործունեություն (40.000 քմ փակ պահեստ և ջերմատնային տնտեսություն)	Գործում է մասնակի
13	«Ոսկե կացին» ՍՊԸ	Էջմիածնի խճուղի թիվ 15	սպանդանոց-մսամթերքի արտադրություն	գործում է
14	«Մեդիկալ հորիզոն»	Մասիս կայարան	դեղերի արտադրություն	գործում է
15	«Վաղինակ Եղիազարյան» ԱԶ (նախկին «Գարուն կարի ֆաբրիկա»)	1-ին փող.	կարի արտադրություն	գործում է
16	Մասիսի հացի գործարան	3-րդ փող, թիվ 1	հացի արտադրություն	չի գործում

- Համայնքում գործող ոչ կառավարական կազմակերպությունները /ՀԿ-ներ, հիմնադրամներ, քաղաքական կուսակցություններ/

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	Գործունեության ուղղվածությունը	Շենքային պայմանները
1	Հայաստանի Հանրապետական կուսակցություն	քաղաքական	լավ
2	Բարգավաճ Հայաստան կուսակցություն	քաղաքական	բավարար
3	Հայկական Վերածնունդ կուսակցություն	քաղաքական	բավարար
4	Ժառանգություն կուսակցություն	քաղաքական	բավարար
5	ՀՅԴ կուսակցություն	քաղաքական	բավարար
6	Հայաստանի կոմունիստական կուսակցություն	քաղաքական	վարձակալություն
7	Մասիսի զարգացման հիմնադրամ	Համայնքային զարգացում	լավ
8	Զոհված ազատամարտիկների ընտանիքների միություն	սոցիալական-բարեգործական	վարձակալություն
9	«Կարմիր Խաչ» ՀԿ	սոցիալ-կրթական	վարձակալություն
10	Համալսարանակ կրթության կանանց ասոցիացիայի Մասիսի մասնաճյուղ	կրթական	չկա շենքային պայման
11	Հայրենական պատերազմների վետերանների և	սոցիալական	վարձակալություն

	հաշմանդամների միություն		
12	Երկրապահ կամավորական միության Մասիսի մասնաճյուղ	սոցիալական	վատ
13	ՀԵԾ «Աստղաբնակ» ՀԿ	բարեգործական	վատ
14	ՀՕՄ	սոցիալ-կրթական	վարձակալություն
15	Հաշմանդամ երեխաների աջակցող «Արձագանք» ՀԿ	բարեգործական	վարձակալություն
16	«ՆԻԳ ԱՊԱՐԱՆ» հայրենասիրական միություն	բարեգործական	վատ

**1.6. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

1. Մասիս համայնքի գլխավոր հատակագիծը առկա է և տրվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության (20.12.2012թ. թիվ 3 արձանագրություն) համաձայն, որում առկա են նաև քաղաքաշինական գոտիավորման նախագծեր և նախագծային առաջադրանքներ: (Հաստավել է համայնքի ավագանու 12.02.2013թ.-ի թիվ 05-Ա որոշմամբ:)
2. Մասիս համայնքն ունի ընթացիկ քաղաքաշինական քարտեզ և քաղաքաշինական կանոնադրություն, որը հաստատվել է համայնքի ավագանու կողմից:
3. Կառուցապատողներին տրամադրված ճՀԱ վերջին 5 տարիների ընթացքում ըստ տարեթվերի՝

2012թ. – 70 առաջադրանք  
2013թ. – 81 առաջադրանք  
2014թ. – 76 առաջադրանք  
2015թ. – 63 առաջադրանք  
2016թ. – 67 առաջադրանք



4. Մասիս համայնքի տարածքով անցնում է միջպետական Երևան-Երասխ մայրուղին:
5. Մասիս համայնքում առկա է ներհամայնքային հաղորդակցության ուղիներ, ջրմուղկոյուղու ցանց, ոռոգման ցանց:
6. Մասիս համայնքի տարածքը բարեկարգվում է և գտնվում է համայնքի ղեկավարության ամենօրյա ուշադրության կենտրոնում: Վերջին մեկ տարվա ընթացքում բարեկարգվել և նոր տեսք է ստացել կենտրոնական հրապարակին կից պուրակը: Կանաչ գոտիների պահպանման աշխատանքներ են տարվում յուրաքանչյուր տարի 2,6 հեկտար տարածություն վրա, որից հասարակական օգտագործման կանաչ զանգվածներ, ծառատնկված վայրեր:
7. Աղբահանությունը սանիտարական մաքրումը կատարվում է Մասիս քաղաքի ամբողջ տարածքում «Մաքուր Մասիս» ՓԲԸ-ի կողմից (Հիմնադիրը՝ Մասիս համայնք): Վերջինս ունի սանմաքիման և աղբահանության համար անհրաժեշտ մեքենաներ և սարքավորումներ:
8. Համայնքի տարածքում սանմաքիման կայաններ չկան:
9. Համայնքի փողոցներում առկա է 50% լուսավորվածություն: Համայնքի կենտրոնական փողոցները լուսավորված են, գտնվում են բավարար վիճակում: Աշխատանքներ են տարվում նոր բարեկարգված փողոցների լուսավորության ուղղությամբ, որոնք ներառված են համայնքի զարգացման ծրագրում:
10. Համայնքն ունի մեկ գերեզմանատուն, որի ընդհանուր մակերեսը կազմում է 9,21 հա: Պարսպապատված է մասնակիորեն, գերեզմանատան հարավային կողմից առկա է սանիտարապաշտպանական գոտի:

### **1.7. ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ**

- Համայնքի բազմաբնակարան շենքերի թիվը՝ 90, բնակարանների թիվը՝ 3772
- Հանրակացարանների թիվը՝ 4 մասնաշենք
- Բնակֆոնդի ընդհանուր մակերեսը՝ 400.120 քմ, այդ թվում՝  
  - համայնքային սեփականություն՝ չկա
  - ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականությունը՝ 400.120 քմ
  - պետական սեփականություն՝ չկա
- Բազմաբնակարան վթարային շենքերի և բնակարանների թիվը՝ 0
- Կիսակառույց բազմաբնակարան շենքերի թիվը՝ 1 (կոպերատիվ)
- Համատիրությունների թիվը, բազմաբնակարան շենքերի լիազորագրային և հավատարմագրային կառավարման մարմինների թիվը, բազմաբնակարան շենքերի թիվը՝ ըստ կառավարման ձևերի (համայնք, համատիրություն, լիազորագրային, հավատարմագրային)՝ 0
- բազմաբնակարան շենքերի վերելակների թիվը և վիճակը՝ 0

- բնակելի տների թիվը՝ 1765
- կիսակառույց առանձնատների թիվը՝ 110
- ոչ բնակելի տարածքների թիվը՝ 10 , մակերեսը՝ 15.500 քմ  
համայնքային սեփականություն՝ 15.500 քմ  
ֆիզիկական և իրավաբական անձանց սեփականություն՝ 0  
պետական սեփականություն՝ 0
- Ավտոտնակների թիվը՝ 700, որից օրինականը՝ 110, անօրինականը՝ 590, ընդհանուր մակերեսը՝ 14.000 ք.մ.

### **1.8. ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ**

- Համայնքի վարչական տարածքի ընդհանուր մակերեսը՝ 1870.23 հա, այդ թվում՝  
  
բազմաբնակարան շենքերի պահպանման և սպասարկման հողամասեր՝ 471,43 հա  
արտադրական նշանակության հողեր՝ 331,95 հա  
գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 935,147 հա  
գերատեսչական հիմնարկների զբաղեցրած հողեր՝ 11,201 հա  
հատուկ պահպավող տարածքների հողեր (պատմական)՝ 10,29 հա  
ջրային ֆոնդեր՝ 43,02 հա
- Բնակավայրի տարածքը՝ 456,313 հա, որից՝  
բնակելին՝ 238,78 հա  
հասարակական հողեր՝ 73,6122 հա  
խառը կառուցապատման հողեր՝ 4,3706 հա  
ընդհանուր օգտագործման հողեր՝ 75,0897 հա  
այլ՝ 64, 455 հա
- Հողի սեփականաշնորհմանը մասնակցած ընտանիքների թիվը՝ 1681
- Սեփականաշնորհված հողերի մեկ հողաբաժնի չափը՝ 0.25 հա և 0.15 հա
- Մեկ տնտեսությանը պատկանող գյուղատնտեսական հողամասերի քանակը՝ 2
- Համայնքի սեփականություն համարվող հողերը՝ 553,6632 հա
- Օտարված և օգտագործման (անհատույց, վարձակալության) տրամադրված հողերը՝ 173 հա

## **1.9. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

Գյուղատնտեսության առաջատար ճյուղերն են բանջարաբուծությունը, խաղողագործությունը, պտղաբուծությունը և բոստանային կուլտուրաների մշակությունը: Կարևոր և կենսական նշանակություն ունեն կարտոֆիլի և հացահատիկի արտադրությունը: Արտադրված գյուղմթերքի մի փոքր մասն է միայն սպառվում ներքին շուկայում: Հիմնական սպառողը Երևան քաղաքի բնակչությունն է: Քաղաքն ունի մասնավորեցված և առայժմ պարապուրդի մատնված պահածոների գործարան:

Ունենալով բնակլիմայական պայմանների և աշխարհագրական դիրքի նպաստավորություն, մարդկային ռեսուրսների հարստություն գյուղատնտեսության և վերամշակող արդյունաբերության որոշ ճյուղերի զարգացման համար՝ Մասիսն ապահովված է գյուղատնտեսական զարգացման պոտենցիալով:

### **Դաշտավարություն՝**

Համայնքում 2016 թվականին մշակվել են՝

- հացահատիկային և հատիկաընդեղային մշակաբույսեր՝ 442 հա
- կարտոֆիլ՝ 25 հա
- բանջարանոցային մշակաբույսեր՝ 151 հա
- բոստանային մշակաբույսեր՝ 12 հա
- պտուղ՝ 7.47 հա
- խաղող՝ 32.34 հա
- բազմամյա խոտ՝ 59 հա
- միամյա խոտ՝ 73 հա

### **Անասնապահություն՝**

Մասիս համայնքում անասնապահությամբ զբաղվում է 168 տնտեսություն:

Խոշոր և եղջերավոր անասունների քանակը՝

- Խոշոր եղջերավոր անասունների քանակը՝ 861 գլուխ
- խոզեր՝ 1946 գլուխ
- ոչխարներ՝ 155 գլուխ
- այծեր՝ 24 գլուխ
- ձիեր՝ 3 գլուխ
- ճագարներ՝ 832 գլուխ
- թռչուններ՝ 5571 թև

- մեղվաընտանիքներ՝ 219 ընտանիք

### **Այգեգործություն՝**

2016թ. համայնքում արտադրվել է՝

- հացահատիկ՝ 20880 ցենտներ
- կարտոֆիլ՝ 8500 ցենտներ
- բանջարեղեն՝ 62212 ցենտներ
- բոստանայնի կուլտուրաներ՝ 4200 ցենտներ
- պտուղ՝ 675 ցենտներ
- խաղող՝ 3493 ցենտներ
- բազմամյա խոտ՝ 12 095 ցենտներ
- միամյա խոտ՝ 5730 ցենտներ
- ծղոտ՝ 1700 ցենտներ

Համայնքի ոռոգելի գյուղատնտեսական նշանակության հողատարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 641.81 հա:

Արոտավայրերի ջրարբիացվածության մակարդակը՝ անջրտի:

Դաշտամիջյան ճանապարհները գտնվում են բարվոք վիճակում:

Համայնքն ապահովված է 85 միավոր գյուղատնտեսական տեխնիկայով:

### **1.10. ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

- Համայնքում առկա չենհողերիաղակալում, հողմնահարում, ճահճացում, ողողում, անապատացում,
- Հողերի, ջրերի, օդի և շրջակա միջավայրի աղտոտումը՝
  - Կազմակերպված է քաղաքի աղբահանության խնդիրը: Համայնքն ունի արտոնագրված աղբատեղի, որի ընդհանուր մակերեսը կազմում է 13 հա: Սակայն լուրջ անելիքներ կան քաղաքային աղբանոցի ուղղությամբ: Աղբատեղին գտնվում է բնակելի տարածքից ուղիղ գծով 1.5 կմ հեռավորության վրա, որը շրջակա միջավայրի և քաղաքի օդային ավազանի համար լուրջ խնդիր է առաջացնում՝ հատկապես շոգ եղանակի պայմաններում: Տարածքը ցանկապատված չէ:

- Վերջին տարիներին արտադրական շատ ձեռնարկություններ պարապուրդի ենմատնված, և այդ պատճառով մթնոլորտի աղտոտվածությունը չի գերազանցում թույլատրելի նորման:
  - Արդյունաբերական թափոնները՝ 30,1 տ/տարի,
- Մեկ շնչի հաշվով թափոնների քանակը՝ 220 կգ,
  - Բնօգտագործման պայմանները պահպանվում են մասնակիորեն՝
    - գյուղատնտեսական բնօգտագործում, ագրոտեխնիկական կանոնները հիմնականում պահպանվում են,
    - արդյունաբերական բնօգտագործում, հանքերի շրջակա հողերի խախտվածություն չկա,
    - հողերի ռեկուլտիվացիայի անհրաժեշտություն՝ մշտապես չի իրականացվում,
    - համայնքն արտավայրերով թույլ է ապահովված,
    - անասունների ջրման կենտրոնացված վայրերի առկայություն, դրանց սանիտարական վիճակը - համայնքը դրա անհրաժեշտությունը չունի, սանիտարական վիճակը նորմալ է:
  - Համայնքում չկա անտառածածկույթ,
  - Համայնքն ունի 48 կմ երկարությամբ ոռոգման ներտնտեսային ցանց, որից շուրջ 18 կմ՝ երկաթբետոնե, իսկ մնացածը՝ հողային հունով: Ուշադրություն է դարձվում դրենաժների մաքրմանը: Ոռոգման ջրի ջրահեռացման ցամաքորդները ցամաքել են և չեն ծառայում իրենց նպատակին: Ոռոգման ցանցի կիսախողովակների անմխիթար վիճակը հանգեցնում է ջրային մեծ կորուստների: Ունենք ոռոգման ջրի 20%-25% կորուստ,
  - Ջրային ավազանները գտնվում են բավարար վիճակում,
  - Սուր վարակիչ հիվանդություններ չեն նկատվում, հետևաբար չկա կապը շրջակա միջավայրի վիճակի հետ,
  - Թեև բնական պայմանները բարենպաստ չեն ծառերի բնական աճի համար, այնուամենայնիվ հատկապես վերջին տարիներին մեծ ուշադրություն է հատկացվում կանաչապատմանը:

**1.11. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

- Ներհամայնքային փողոցների և ճանապարհների վիճակը, երկարությունը և մակերեսը՝

Փողոցներ (նրբանցքներ)	Վիճակը			Երկարությունը /կմ	Մակերեսը, քմ
	Վատ	Միջին	Լավ		
1. Ասֆալտապատ		X		25	240 000
2. Կոպճապատ	X			10	120 000
3. Գրունտ	X			18	60 000
<b>Ընդամենը՝</b>				<b>53</b>	<b>420 000</b>

-Համայնքից այլ համայնքներ կամ մայրուղի տանող ճանապարհների վիճակը և երկարությունը՝

N	Ճանապարհի անունը	Ասֆալտապատ (այո/ոչ)	Վիճակը			Երկարությունը /կմ/
			Վատ	Միջին	Լավ	
1	Մասիսից Արտաշատ-Երևան մայրուղի	այո		V		1
2	Մասիսից Երևան-Արտաշատ մայրուղի	այո		V		1.2
3	Մասիս-Էջմիածին	այո	V			14

4	Մասիս-Երևան (Ներքին Չարբախ)	այո			V	7
5	Մասիս-Ռանչպար	այո		V		10

**- Տրանսպորտային ծառայությունները՝**

Ընդհանուր առմամբ քաղաքի տրանսպորտային վիճակը բավարար է: Գործում են կանոնավոր ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիներ Երևան, Արտաշատ, Էջմիածին, հարակից գյուղեր երթուղիներով: Քաղաքում գործում են տաքսի ծառայություններ մատուցող մեկ տասնյակից ավելի մեծ ու փոքր ընկերություններ:

N	Համայնքի տարածքով անցնող տրանսպորտ երթուղային	Սպասարկող մեքենաների թիվը	Վերջին կանգառ	Վճարը
1	Մարզային նշանակության երթուղային ավտոբուս	5 ավտոբուս, 6 միկ/ավտոբուս	Արտաշատ, Նոր-Խարբերդ, Այնթապ, Ռանչպար, Սիս Հովտաշատ, Նորամարգ, Նիզամի	100- 200 դր
2	Հանր. նշանակության երթուղային ավտոբուս*	12 միկ/ավտոբուս, 6 ավտոբուս	Երևան, Էջմիածին	150- 200 դր

\* Մասիսով է անցնում Երևան-(Գորիս-Ստեփանակերտ)-Մեղրի-Թեհրան միջպետական նշանակության մայրուղին, ինչպես նաև Երևան-Այրում, Երևան-Երասխ երկաթգիծը:

Համայնքում տարածքում ճանապարհային երթևեկության նշանների վիճակը գնահատվում է բավարար:

### 1.12. ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Համայնքի տարածքում անտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի օբյեկտների թիվը, այդ թվում՝**

- անտրի փոքր, միջին և խոշոր օբյեկտներ՝ 77
- սուպերմարկետներ՝ 4
- բենզինի լցակայաններ՝ 3
- գազի լիցքավորման կետեր՝ 2
- հանրային սննդի օբյեկտներ՝ 16
- շահումներով խաղերի օբյեկտներ՝ 2
- բանկային մասնաճյուղեր՝ 5
- վարկային կազմակերպություններ՝ 5
- հեռահաղորդակցման ծառայություններ՝ 4
- հյուրանոցային ծառայություններ՝ 2

### 1.13. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

**- Հանրակրթական դպրոցների թիվը՝ 6**

Հ/Հ	Հանրակրթական դպրոցներ	Դպրոցականների թիվը	Աշխատողների թիվը	Շենքերի վիճակը
1	Մեսրոպ Մաշտոցի անվան թիվ 1 հիմնական դպրոց	683	61	բավարար
2	Վահրամ Բաբայանի անվան թիվ 2 հիմնական դպրոց	846	61	բավարար
3	թիվ 3 հիմնական դպրոց	488	53	վատ
4	թիվ 4 հիմնական դպրոց	232	38	վատ
5	թիվ 5 ավագ դպրոց	160	36	լավ
6	թիվ 6 հիմնական դպրոց	150	31	վատ



- Նախադպրոցական հիմնարկների թիվը՝ 6

Հ/Հ	Նախադպրոցական հիմնարկներ	Խմբերի թիվը	Երեխաների թիվը	Աշխատողների թիվը	Շենքերի վիճակը	Նորոգման և գույքային կարիքները
1	«Մասիսի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ	3	81	18	բավարար	ունի հիմնանորոգման կարիք, առկա է ուսումնանյութական բազայի ոչ բավարար հագեցվածություն, պահարանների, մահճակալների, մարզագույքի անհրաժեշտություն
2	«Մասիսի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ	3	70	18	բավարար	ունի հիմնանորոգման կարիք, առկա է ուսումնանյութական բազայի ոչ բավարար հագեցվածություն, պահարանների, մահճակալների, մարզագույքի անհրաժեշտություն
3	«Մասիսի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ	8	195	38	շատ վատ	ունի հիմնանորոգման կարիք, առկա է ուսումնանյութական բազայի ոչ բավարար հագեցվածություն, պահարանների, մահճակալների, մարզագույքի անհրաժեշտություն
4	«Մասիսի թիվ 4 մանկապարտեզ»	5	118	25	բավարար	ունի հիմնանորոգման կարիք

	ՀՈԱԿ					
5	«Մասիսի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ	4	111	22	վատ	ունի հիմնանորոգման կարիք, առկա է ուսումնանյութական բազայի ոչ բավարար հագեցվածություն, պահարանների, մահճակալների, մարզագույքի անհրաժեշտություն
6	«Մասիսի թիվ 7 մանկապարտեզ» ՀՈԱԿ	2	34	16	շատ վատ	ունի հիմնանորոգման կարիք, առկա է ուսումնանյութական բազայի ոչ բավարար հագեցվածություն, պահարանների, մահճակալների, մարզագույքի անհրաժեշտություն

**- Արտադպրոցական դաստիարակության հիմնարկների թիվը՝ 1**

«Մասիսի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն» ՀՈԱԿ

Աշխատողների թիվը՝ 20

խմբերի թիվը՝ 24

աշակերտների թիվը՝ 182

Շենքի վիճակը՝ բավարար

Ունի նորոգման կարիք

#### **1.14. ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

##### **- Երաժշտական դպրոցների թիվը՝ 1**

“Առնո Բաբաջանյանի անվան երաժշտական դպրոց” ՀՈԱԿ

Բաժինների թիվը՝ 6

Հաճախորդների թիվը՝ 163

աշխատողների թիվը՝ 45

Շենքի վիճակը՝ բավարար

Նորոգման և գույքային կարիքները՝ ունիմասնակի նորոգման կարիք

##### **- Գեղարվեստի դպրոցների թիվը՝ 1**

“Գեղարվեստի դպրոց” ՀՈԱԿ

Խմբերի թիվը՝ 4

Հաճախորդների թիվը՝ 45

աշխատողների թիվը՝ 10

Շենքի վիճակը՝ բավարար

Նորոգման և գույքային կարիքները՝ ունի ուսումնանյութական բազայի նորացման և համալրման կարիք

##### **- Գրադարանների թիվը՝ 1**

“Մասիսի քաղաքային կենտրոնական գրադարան” ՀՈԱԿ

Աշխատողների թիվը՝ 22

Գրքային ֆոնդը՝ 58 000

Շենքի վիճակը՝ վատ

Նորոգման և գույքային կարիքները՝ ունի հիմնանորոգման և գրքային ֆոնդի բարելավման խիստ կարիք

**1.15. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ**

<b>Բուժ. հաստատության անվանումը</b>	<b>Հզորությունը</b>	<b>Բժիշկների թիվը</b>	<b>Բուժաշխատողների թիվը</b>	<b>Շենքերի վիճակը</b>	<b>Նորոգման և գույքային կարիքները</b>
«Մասիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ	220 մահճակալ	50	117	բավարար	ունի նորոգման կարիք և գույքի նորացման կարիք
«Մասիս» օրթոպեդիկ հիվանդանոց ՓԲԸ	40 մահճակալ	5	18	բավարար	
Պոլիկլինիկա		26	47	բավարար	ունի մասնակի նորոգման կարիք և գույքի նորացման կարիք
Արտաշատի սանէպիդկայանի Մասիսի տեղամաս		3	6	վատ	ունի հիմնանորոգման և նոր սարքավորումների կարիք

Բուժսպասարկան նյութատեխնիկական բազան գտնվում է բավարար վիճակում. անհրաժեշտ է զինել նոր նյութատեխնիկայով:

## **- Մարզադպրոցների թիվը՝ 1**

“Արմեն Նազարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց” ՀՈԱԿ

Երեխաների թիվը՝ 173

Մարզաձևերը՝

1. բասկետբոլ,
2. վոլեյբոլ,
3. ազատ և դասական ոճի ըմբշամարտ,
4. կարատե-դո,
5. ձյուդո,
6. շախմատ,
7. ֆուտբոլ,
8. բռնցքամարտ,
9. սամբո:

խմբերի թիվը՝ 14

աշխատողների թիվը՝ 22

Շենքի, մարզադաշտերի և խաղահրապարակների վիճակը՝ լավ

Նորոգման և գույքային կարիքները՝ նորոգման կարիք չունի, ունի մարզագույքի խիստ կարիք

## **- Մարզադաշտերի թիվը՝ 4 (ֆուտբոլի, մինի ֆուտբոլի, բասկետբոլի, վոլեյբոլի)**

Նորոգման և գույքային կարիքները՝ գտնվում են լավ վիճակում, գույքային կարիքներ չունեն

### **1.16. ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ**

Համայնքն ունի՝

- զբոսայգի՝ 0,5 հա
- խաղահրապարակ՝ 0,75 հա
- հանգստի գոտի՝ 0,5 հա
- մերձակա անտառային գոտի՝ չկա
- բակային տարածքը՝ 4,2 հա

Բակային տարածքները գտնվում են բավարար վիճակում և ունեն բարեկարգման կարիք:

**1.17. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

**- Աշխատանքի սոցիալական ծառայության հաստատությունները՝**

N	Հաստատության անվանումը	Գործունեության ուղղվածությունը	Շահառուների թիվը	Շենքի վիճակը	Նորոգման և գույքային կարիքները
1	Զբաղվածության Մասիսի տարածքային կենտրոն	զբաղվածության ծրագրերի իրականացում	1723	լավ	չկա
2	Սոցիալական աջակցության Մասիսի տարածքային գործակալություն	կյանքի դժվարին իրավիճակի մեջ հայտնված անձանց հայտնաբերում և սոցիալական աջակցության ցուցաբերում	2300	լավ	չկա
3	Մասիսի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություն	բնակչության սոցիալական խնդիրների լուծում	2348	լավ	չկա

**- Հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների նկարագրությունը՝**

- բնակարանի բացակայություն,
- կենցաղային պայմանների բացակայություն /էլ. էներգիայի, գազի, ջրի/,
- սայլակով հմանդամների տեղաշարժման անհարմարություն /բազմաբնակարան բնակելի շենքերում ապրողների համար/,
- սննդի և հագուստի ապահովման անհրաժեշտություն,
- ձմռան ամիսներին ձեռուցման բացակայություն:

Նախատեսվում են տեղական սոցիալական ծրագրեր համայնքի սոցիալապես անապահով խավերի պայմանների բարելավման ուղղությամբ:

